

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՆՎՈՐ-ԾԱՌԱՅՈՂՆԵՐԸ ԵՎ ԳՅՈՒԴԱՅԻՈՒԹՅՈՒՆԸ ՍՏԱԼԻՆՅԱՆ ԲՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁՈՂ

## Ա. Ս. ՄԱՆՈՒԿՅԱՆ

Ինչպես նախկին Խորհրդային Միության բոլոր տարածքներում, այնպես էլ Հայաստանում 1930-ական թվականներին ծավալված ստալինյան բռնությունները իրենց խոր բացասական հետքը թողեցին ժողովուրդների կյանքում: Բռնությունները, որոնք տեղի ունեցան երկու մեծ փուլերով՝ 1929-1930-ականների սկիզբ՝ համատարած կոլեկտիվացման շրջանում, և 1937-1938 թթ.՝ զանգվածային քաղաքական ճնշումների ժամանակ, ընդգրկեցին երկրի բոլոր ազգերը ու ժողովուրդները, հասարակական բոլոր խավերը և շերտերը: Բնական է, որ համատարած կոլեկտիվացման ժամանակ առավել շատ էին տուժողները գյուղական վայրերից, իսկ հետագայում բռնությունների սլաքն ուղղվում է նաև հասարակական-քաղաքական, եկեղեցական գործիչների, մտավորականության և գրականության մշակների, գինվորականների և մյուսների վրա: Այդ մարդկային ողբերգությունից անմասն չմնացին նաև մեծ թվով Հայաստանի բանվոր-ծառայողներ և գյուղացիներ:

Խորհրդային կարգեր հաստատելիս՝ Հայաստանը հետամնաց գյուղացիական երկիր էր, և մինչև 1930-ական թթ. կեսերը գյուղացիությունը կազմում էր բնակչության ճնշող մեծամասնությունը: Ծիշտ է, այդ տարիներին զգալի առաջընթաց է ապրում հանրապետության արդյունաբերությունը, որով և պայմանավորվում է բանվոր-ծառայողների զգալի աճ, սակայն, անգամ 1937 թվականի տվյալներով, բանվոր-ծառայողները դեռ կազմում էին բնակչության 34,7 տոկոսը, կոլտնտեսականները՝ 55,5 տոկոսը: Վիճակն ավելի հստակ ներկայացնելու համար նշենք նաև, որ 1913 թ. Հայաստանի արդյունաբերության մեջ աշխատել է 4956 բանվոր-ծառայող, 1926 թ.՝ 27400, 1932 թ.՝ 93996 և 1936 թ.՝ 104505<sup>1</sup>:

Ի դեպ, 1939 թ. Հայաստանի բնակչությունը կազմում էր 1.281599 մարդ<sup>2</sup>:

Ըստ ՀՀ ՆԳ և ԱԱՆ ԱԱ արխիվի տվյալների, 1930-1938 թթ. Հայաստանում բռնությունների է ենթարկվել ավելի քան 14904 մարդ, եթե դրան ավելացնենք 1920-1929 թթ. բռնադատված 1246 հոգուն և 1921 թ. Ռ-յազան արքայից 1400 զինվորականներին<sup>3</sup> (վերջիններիս մասին ամբողջական տեղեկություններ ՀՀ արխիվներում չեն պահպանվել), ապա ակնհայտ կդառնա, որ այդ ալիքը բավականին զգալի հարված էր բնակչությանը: Քանի որ ստալինյան զանգվածային բռնությունները Հայաստանում մինչև 1949 թ. հայտնի արքայից արքայից արքայից են 1930-ական թվականներին, ուստի ներկայացնենք 1930-1938 թթ. հանրապետությունում բռնադատվածներին ըստ մասնագիտությունների: Արխիվային գործերում դժվարությամբ են տարբերակվում մի շարք մասնագիտություններ: Այսպես, գործերում որպես առանձին մասնագիտություններ են նշվում և ուսուցիչը, և մանկավարժը: Վերջինս, բնականաբար, կարող էր լինել նաև բուհի դասախոս: Կամ՝ գյուղական բնակչությունը որպես աղյախիսն չի դասակարգված, այլ նշվում են առանձին մասնագետներ, որտեղից կարելի է ենթադրել, որ դրանք գյուղի բնակիչներ են: Սակայն այստեղ էլ կարող են վերապահումներ լինել: Օրինակ, որպես հողագործ, տրակտորիստ ներկայացված մարդկանց և նույնիսկ կոլտնտեսականների մեջ կարող են գտնվել նաև քաղաքի բնակիչներ և այլն: Նպատակահարմար է դիտվել աղյուսակում առանձնացնել ավելի ընդհանրական և համեմատաբար մեծ թիվ կազմող մասնագիտությունները:

Եթե կոլտնտեսականներին և կուլակներին միացնենք աղյուսակում չնշված չորսաններին (49 մարդ), տրակտորիստներին (7 մարդ), հողագործներին (18 մարդ), ապա կկազմի 8657 մարդ, ընդ որում,

<sup>1</sup> Տես «Հայ ժողովրդի պատմություն», հ. 7, ԳԱ, եր., 1967, էջ 367:

<sup>2</sup> Տես նույն տեղը, էջ 241, 333, 367:

<sup>3</sup> Տես նույն տեղը, էջ 367:

<sup>4</sup> Տես «Հայրություն», նոյեմբեր 1992, մայիս 1994:

Աստվածաբանությունը	Կոլեկտիվի ազատական	Կոլեկտիվ	Քանակը	Ծառայող	Առավելագույնը (զինակալ, գրող և այլն)	Ուսումը, մանկապարտեզ	Քիմիկ	Չեղ-դրամյան	Զինվորական	Ազատ	Լճու աշխատակից
Տարբերակ	1278	84	88	36	-	32	6	25	18	1	2
1930	1041	36	53	30	5	18	6	18	51	9	1
1932	822	26	46	28	2	19	1	9	18	-	2
1933	876	43	132	87	4	9	8	10	27	-	5
1934	38	2	4	11	-	4	-	2	5	-	-
1936	98	6	80	30	1	7	1	1	6	3	2
1938	248	22	80	84	9	20	8	3	3	2	-
1937	2723	293	271	227	24	101	29	79	46	11	6
1938	1583	161	198	210	53	80	21	38	27	28	23
Ընդամենը	8382	201	897	724	98	270	77	183	201	84	41

չի բացառվում, որ ծառայողների, բժիշկների, ուսուցիչների և այլ մասնագիտությունների տեր մարդիկ ևս կարող էին լինել գյուղի բնակիչներ:

Ստալինյան բռնությունները Հայաստանում առաջին անգամ առավել ցայտուն դրսևորվեցին 1930-ական թվականների սկզբներին, որը կապված էր համատարած կոլեկտիվացման շարժման հետ: Նշենք, որ ԽՍՀՄ-ում այդ տարիներին, բացի կոլեկտիվացման շարժման հետ կապված բռնություններից, արդեն սկսվել էին նաև հնչել քաղաքական պրոցեսները: Արդեն իսկ 1929 թ. անց էր կացվում կուսակցության և պետապարտի «գառունը», որի հետևանքով աշխատանքից ազատվել էին ավելի քան 138 հազար ծառայողներ<sup>5</sup>: 1930 թ. «բացահայտվեց» և քաղաքական դասական պրոցես կայացավ, այսպես կոչված, Գյուղացիական աշխատավորական կուսակցության անդամների, խոշորագույն գյուղատնտես-գիտնականների՝ Ա. Չայանովի, Ն. Կոնդրատևի և մյուսների նկատմամբ, ապա դատվեցին Արշունաբերական կուսակցության անդամները, իսկ 1931 թ. հայտարարվեց մի նոր «վնասարարական» կազմակերպության՝ «Մենչևիկների ՌՄԴՀԿ ԿԿ-ի Միութենական բյուրոյի» մասին և այլն:

Ինչպես հայտնի է, 1929-ի վերջերին սկսված համատարած կոլեկտիվացման խնդիրն էր «գյուղի սոցիալիստական վերափոխումը», որը կատարվեց վարչարարական, բարբարոսական ձևերով և շատ կարճ ժամանակահատվածում: Ագրարային հարցերը տնտեսական միջոցներով լուծելու փոխարեն (դրանց մինչ այդ ինչ-որ չափով նպաստում էր ՆԷՊ-ի քաղաքակրթությունը), ճոճ քաղաքներին պարենամթերքով ապահովելու, օրապահանջ խնդիրը լուծելու համար կիրառվեց բռնի կոլեկտիվացումը: Այն, բնականաբար, հանդիպեց ուժեղ դիմադրության և չկարողացավ վերջնականապես հարթել գյուղատնտեսության մեջ եղած հարցերը: 1930 թ. սկզբից սկսվում են կուլակաթափման զանգվածային միջոցառումները, ինչն ավելի բացասաբար է ազդում գյուղի վրա, միաժամանակ ուժեղանում է հակակեղեցական ահաբեկչությունը, փակվում են եկեղեցիները և վանքերը: 1930 թ. վերջին փակվել էին գյուղական վանքերի 80 տոկոսը: Միայն 1930-1931 թթ. կուլակաթափվել և հեռավոր շրջաններ էր արտարվել ավելի քան 382 հազար գյուղացիական ընտանիքներ<sup>6</sup>:

Բնական է, որ Խորհրդային Միության մաս կազմող Հայաստանում ևս ընթանում էին նման երևույթներ՝ կրելով տեղական բնույթի մասնակի յուրահատկություններ: Վերջիններս հիմնականում դրսևորվում էին մեղադրականների ձևակերպման մեջ: Հասկանալի է, որ Հայաստանի իշխանությունները «հատուկ» ուշադրություն էին դարձնում կուլակների, կուլակաթափության կոմպանիայի մեջ ընդգրկված գյուղացիության անցյալին՝ օգտագործելով շատերի նախկին առնչությունները դաշնակցության և հայկական ավանդական այլ կուսակցությունների հետ, այս կամ այն ձևերով մասնակցությանը 1921 թ. հակախորհրդային ապստամբությանը և այլն:

1930 թ. հունվարի 5-ի ՀամԿ(բ)Կ ԿԿ-ի «Կոլեկտիվացման տեմպի և կոլտնտեսային շինարարությանը պետության կողմից օգնություն ցույց տալու միջոցառումների մասին» որոշումը ավելի արագացրեց համատարած կոլեկտիվացման շարժման ընթացքը և դրա հիման վրա կուլակությանը որպես դասակարգ վերացնելու ուղղությամբ իշխանությունների գործողությունները<sup>7</sup>:

Դասակարգային պայքարի սրման ստալինյան լոզունգի ներքո սկիզբ առան «ժողովրդի թշնամիների» զանգվածային բացահայտումներն ու բռնությունները: Դրան նպաստեց 1930 թ. փետրվարի 1-ի ԽՍՀՄ Կենտգործկոմի և Ժողկոմխորհրդի որոշումը, որը վերացրեց մինչև այդ գործող անհատ տնտեսությունների՝ հողի վարձակալման և վարձու աշխատանքի օգտագործման որոշումը: Դրանով տեղա-

<sup>5</sup> Տե՛ս *М. М. Горинев и др., История России, ч. 2, М., 1955, էջ 241:*

<sup>6</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 235:

<sup>7</sup> Տե՛ս «ՄՄԿԿ-ն քանաձև երում ու որոշումներում», 2-րդ մաս, Եր., 1955, էջ 840-843:

կան իշխանություններին իրավունք վերապահվեց համատարած կոլեկտիվացման վայրերում բռնագրավել կուլակային տնտեսությունների արտադրական միջոցները, տնտեսական կառույցները և դրանց տերերին արտաքսել<sup>8</sup>:

Համատարած կոլեկտիվացումը Հայաստանում ևս ընթանում էր սխալներով և այդ գաղափարի խեղաթյուրումներով: Այսպես, 1930 թ. հունվար ամսվա ընթացքում կոլեկտիվացումը 4,6-ից հասավ 33,5 տոկոսի, իսկ փետրվարի հինգ օրվա ընթացքում այն արդեն 53,5 տոկոս էր<sup>9</sup>:

Ինչպես նկատելի է վերը ներկայացրած աղյուսակից, 1930-1933 թթ. Հայաստանում բռնադատվածների մեջ համեմատաբար մեծ թիվ էին կազմում կոլտնտեսականները և կուլակները՝ 3877 մարդ: Համեմատության համար նշենք, որ նույն ժամանակահատվածում բռնադատված բանվորների և ծառայողների թիվը կազմում էր 394: Այնուհաստ է բռնությունների սլաքի ուղղությունը դեպի գյուղ:

Արդեն մշել ենք, որ համատարած կոլեկտիվացումը բնականաբար հանդիպում էր դիմադրության, որի դրսևորումները նկատելի են նաև Հայաստանում: Այսպես, միայն 1930 թ. փետրվարի 15-ից մինչև մարտի 15-ը տարբեր շրջաններում տեղի ունեցան 24 հակակոլտնտեսային ելույթներ և այլն<sup>10</sup>:

Այդ ժամանակահատվածում Հայաստանում ևս ուժեղանում է հակահեղեցական գործունեությունը: Այսպես, 1930-1933 թթ. բռնադատվում են 89 հոգևորականներ, փակվում են մի շարք եկեղեցիներ և այլն: Կոլտնտեսային շարժման դեմ զինված ելույթներին մասնակցելու համար 1930 թ. գեղակահարվել են Երևանի գավառի Հորադոզ գյուղի Տեր-Ստեփան քահանա Ավետիսյանը, Դարալագյազի շրջանի Խաչիկ գյուղի Տեր-Արիստակես քահանա Խաչատրյանը, Ջանգեզուրում իշխանության մարմինների հետ զինված ընդհարումների մասնակցելու համար ձերբակալվում են քահանաներ Տեր Հարություն Տեր-Վարդանյանը, Տեր Հովհաննես Տեր-Հարությունյանը և Տեր Վահան Ասատրյանը և այլն<sup>11</sup>:

Իշխանությունների՝ 1930 թ. սկզբներին ծավալած կոլեկտիվացման շարժմանը հատկապես մեծ դիմադրություն են ցույց տալիս Էջմիածնի շրջանում, որտեղ ՊԼԿ-ն ձերբակալում է 33 մարդու՝ մեղադրելով Երևանից ղեկավարվող՝ Էջմիածնի, Աշտարակի և Ղուրղուղլիի շրջաններում գործող դաշնակցական խմբի կազմում ընդգրկված լինելու մեջ: Այդ և 1929 թ. վերջին ձերբակալված 35 անդամներից բաղկացած խմբի ղեկավարն էր Գրիգոր Մոկացին<sup>12</sup>:

Նմանատիպ մեղադրանքով ձերբակալվում են Ն. Բայազետի գավառի 24 բնակիչներ, որոնք կազմակերպել էին ընդհատակյա «դաշնակցական» խումբ, զբաղվում էին «հակահեղափոխական, հակախորհրդային» գործունեությամբ<sup>13</sup>:

Ուշագրավ է, որ 1930-ականների սկզբներին կոլեկտիվացման դեմ իրենց գործունեությունը աշխուժացրել էին նաև Հայաստանի ուսաբնակ գյուղերի բնակիչները: Պրիզունների ու բապտիստների կրոնական աղանդների ներկայացուցիչները Ալեքսանդրովկա գյուղում անց են կացնում եռօրյա պաս, որն ուղեկցվում էր հակակոլտնտեսային բուռն ագիտացիայով<sup>14</sup>:

Հակակոլտնտեսային շարժումը իրավ համախմբել էր Հայաստանում բնակվող տարբեր ազգերի ներկայացուցիչներին: Օրինակ, շատ ՀԽՍՀ ՆԳԺԿ-ի տվյալների, 1931-1932 թթ. Ներքին Ախտայի, Դիլիջանի, Ն. Բայազետի շրջաններում նախկին գյուղապետ Սարիբեկ Գրիգորյանի, միջակ-գյուղացի Մնացական Առաքելյանի և ուրիշների նախաձեռնությամբ ստաղծվել է «Ազգերի Միության Բյուրո» կազմակերպությունը, որի մեջ ընդգրկվել էին նաև ասորիներ, քրդեր, աղբբեջանցիներ և ռուսներ: Այդ կազմակերպության հիմնական խնդիրն է եղել խորհրդային կարգերի զինված տապալումը և «դաշնակցական իշխանության հաստատումը Հայաստանում»<sup>15</sup>: Այդ կազմակերպության անդամ լինելու համար հիշյալ շրջաններից և Երևանից բռնադատվում է 128 մարդ<sup>16</sup>:

Հակախորհրդային, դաշնակցական, ապստամբական և լրտեսական կազմակերպության անդամ լինելու մեջ մեղադրվելով՝ գնդակահարվում են Վեդիի շրջանի բնակիչներ, ասորիներ Վ. Թամրազովը,

<sup>8</sup> Տե՛ս «Հայ ժողովրդի պատմություն», հ. 7, ԳԱ, եր., 1967, էջ 297-298:

<sup>9</sup> Տե՛ս Վ. Ղազարխանյան, Հայաստանի կոլտնտեսային գյուղացիության պատմությունը, 1929-1937, եր., 1978, էջ 55:

<sup>10</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 66-67, 83-97:

<sup>11</sup> Տե՛ս ՀՀ ՆԳ և ԱՄՆ ԱԱ արխիվ, ԿԳՖ, գ. գ. 9491, ք. 28, 10127 ք. 36 10682, հ. 3, ք. 254:

<sup>12</sup> Տե՛ս նույն տեղը, գ. գ. 6022, հ. 1, ք. ք. 328-329, 418, 6055, ք. 558:

<sup>13</sup> Նույն տեղում, գ. 9948, ք. 213:

<sup>14</sup> ՀՀ ՀԶԿՓԿՊԱ, ֆ. 1, ց. 18, գ. 48, ք. 12:

<sup>15</sup> ՀՀ ՆԳ և ԱՄՆ ԱԱ արխիվ, ԿԳՖ, գ. 6953, ք. 69-71:

<sup>16</sup> Տե՛ս նույն տեղը, գ. գ. 5655, 6953, 6892, 6035:

<sup>17</sup> Տե՛ս նույն տեղը, գ. 6065:

Յա. Բաղալովը, Ի. Օվչինը և հայազգի Մ. Բուդաղյանը և այլն<sup>17</sup>: Նույն ցավալի բախտին են արժանանում նաև նախկին կուլակներ, Կալինինոյի շրջանի բնակիչներ Ա. Գվոզդովը, Վ. Գոդունովը, Ա. Գլազովը, Վ. Կոբզևը և ուրիշներ<sup>18</sup>:

1930-ական թվականների առաջին կեսին Հայաստանում կիրառված բռնությունները հիմնականում կապված էին գյուղի հետ. 1933 թ. տրոցկիզմի մեջ մեղադրվող մի խումբ ծառայողներ (Հ. Քամալյան, Ս. Միքայելյան և ուրիշներ) Հողժողովոմատի աշխատակիցներ էին<sup>19</sup>:

1936 թվականի կեսերից բուռն վերելք ապրող ստալինյան բռնությունները Հայաստանում կրկին հարվածեցին գյուղական բնակչությանը: Հատկանշական է, որ այս անգամ, որպես կանոն, նրանց մեղադրականներում հիշատակվում էին նախկին «մեղքերը», որոնց համար շատերն արդեն իսկ ենթարկվել էին բռնությունների: Սակայն այդ տարիներին կայացվում են առավել խիստ որոշումներ՝ գնդակահարություն, 10-20 տարի ազատազրկում և այլն:

Պատկերն ամբողջացնելու նպատակով ներկայացնենք 1937-1938 թթ. բռնադատվածներից մի քանիսի գործերը:

Այսպես, Ամասիայի շրջանի Թաքնալի գյուղի կոլտնտեսականներ Ա. Ասատրյանը, Ա. Պապիկյանը և Մ. Ալեքսանյանը դատապարտվեցին 10 և 8-ական տարի ազատազրկման, որովհետև «1931 թ. հարել են հ/հ (հակահեղափոխական- Ա. Մ.) տրոցկիզմին», որը թաքցրել են կուսակցությունից<sup>20</sup>:

Երևանի բնակիչ, կոլտնտեսական Կ. Բաբաջանյանը գնդակահարվում է, քանի որ եղել է դաշնակցական կուսակցության անդամ, դաշնակցական կառավարության ժամանակ գեներ ձեռքին կռվել է Կարմիր զորամասերի դեմ, 1929 թ. ունեցել է կուլակային տնտեսություն, որը վաճառել է, մտել կոլտնտեսություն և վարել հակակոլտնտեսային քարոզություն<sup>21</sup>:

Գնդակահարվել է նաև Ադինի շրջանի Սարակապ գյուղի կոլտնտեսական, վեց երեխաների հայր Թ. Արտեմյանը, որին մեղադրել են, թե «կուլակների ընտանիքից է ծագում և ինքն էլ մինչև հեղափոխությունը, ինչպես նաև Խորհրդային իշխանության ժամանակ կամավոր բանակ է գնացել (դաշնակցական- Ա. Մ.) և դրդել է նույնը անելու իրենց գյուղացիներին, 1930 թ. վարել է ակտիվ հակակոլտնտեսային քարոզ»<sup>22</sup>:

Տարբեր ժամկետների ազատազրկման են ենթարկվում Հոկտեմբերյանի շրջանի Գոյաշուր գյուղի կոլտնտեսականներ Հ. Ավետիսյանը, Վ. Տեր-Հովհաննիսյանը և Հ. Ֆահրադյանը, որոնք իբրև թե 1935 թ. եղել են շրջանում գործող ընդհատակյա դաշնակցական կազմակերպության անդամներ<sup>23</sup>:

Ն. Բայազետի շրջանի Փաշքենդ գյուղի կոլտնտեսական, 1938 թ. գնդակահարված Ա. Ասոյանի մեղադրական եզրակացության մեջ նշված է, թե նա 1921 թ. մասնակցել է «դաշնակցական արկածախնդրությանը», իսկ 1930 թ. ուներ կուլակային տնտեսություն: 1936 թ. մտնելով կոլտնտեսություն՝ քայքայում էր այն<sup>24</sup>:

Ինչպես նկատելի է, մեղադրյալների «հանցագործ» գործունեությունը հիմնականում վերաբերում էր նախահեղափոխական շրջանին և 1930-ական թվականների սկզբին: Նախկինում կուլակ լինելը գնդակահարություն ստանալու գրեթե անխուսափելի պատրվակ էր: Այսպես, վերջին հանգամանքով էր պայմանավորվում նաև Կապանի շրջանի գյուղացիներ Ա. Ավազյանի, Պ. Հարությունյանի, Ս. Ավագյանի, Ղանադուի շրջանից՝ Բ. Ավագյանի, Կիրովականի շրջանից՝ Ա. Ասլանյանի, Դ. Ավագյանի, Մարտունու շրջանից՝ Ա. Ավդալյանի և Մ. Աֆրիկյանի, Դուզքենդի շրջանից՝ Ե. Ավագյանի, Ադինի շրջանից՝ Վ. Ավետիսյանի, Ն. Ախտայի շրջանից՝ Գ. Բարսեղյանի և շատ ուրիշների գնդակահարության փաստը<sup>25</sup>:

Նույն ճակատագիրն է ունենում Ալավերդու շրջանի գյուղացի-մենատնտես, 5 երեխաների հայր Ե. Անանյանը, որը «1918-1920 թթ. ակտիվ մասնակցություն էր ցույց տվել» «Վայրի դիվիզիայի» զինված բանդային»: Այնուհետև, այլ ձև ակամ պատճառաբանություն չգտնելով, նրան մեղադրել են 1937 թ-ին «բերքահավաքը տապալելու» փորձի մեջ<sup>26</sup>:

1938 թ. գնդակահարվում է նաև Ն. Բայազետի շրջանի հողագործ Ա. Բալագոյանը, որի բոլոր

<sup>18</sup> Նույն տեղում, գ. գ. 5716, 6717, 8268:

<sup>19</sup> Տե՛ս նույն տեղը, գ. 5934, ք. 59-62:

<sup>20</sup> Տե՛ս նույն տեղը, գ. 3081:

<sup>21</sup> Տե՛ս նույն տեղը, գ. 2774, ք. 18:

<sup>22</sup> Տե՛ս նույն տեղը, գ. 5240, ք. 13:

<sup>23</sup> Տե՛ս նույն տեղը, գ. 6469, ք. 63:

<sup>24</sup> Տե՛ս նույն տեղը, գ. 5151, ք. 18:

<sup>25</sup> Տե՛ս նույն տեղը, գ. գ. 10855, 11460, 3718, 11069, 8814, 5551, 7079, 4368:

<sup>26</sup> Նույն տեղում, գ. 2949, ք. 33:

«մեղքերը» և սկսվում են 1921 թ. փետրվարյան ապստամբությանը մասնակցելուց և վերջանում «1930 թ. հակակոլտնտեսային հակահեղափոխական» գործունեությամբ<sup>27</sup>:

1930-1938 թթ. ստալինյան բռնությունների երկու հուժկու ալիքները Հայաստանում հարվածեցին նաև բանվոր դասակարգին: Ինչպես ցույց են տալիս մեր ռուսումնասիրությունները, այդ տարիներին բռնադատվել է 897 բանվոր: Եթե 1930-1931 թթ. նրանց թիվը 119 էր, ապա 1936-1938 թթ. հասնում է 546-ի: Հիշեցնենք, որ հանրապետությունում բանվորության ձևավորումը տեղի էր ունեցել խորհրդային իշխանության տարիներին, և նրանք հիմնականում կազմավորվել էին մախկից գյուղացիներից: Քանի որ Հայաստանում 1930-ական թվականների սկզբներին տեղի ունեցող բռնությունները, որպես կանոն, կապված էին համատարած կոլեկտիվացման շարժման հետ, որն ինչ-որ չափով արդեն ներկայացվել է, ուստի մի քանի օրինակ բերենք 1936-ից հետո բանվորների նկատմամբ կիրառված բռնարարքներից:

Այսպես, Չանգեգուրի պղնձածուլական կոմբինատի բանվոր Ն. Գրիգորյանը 1938 թ. դատապարտվում է 10 տարի ազատազրկման, որովհետև 1905 թ. եղել էր ՌՍԴԲԿ-ի անդամ, մեղադրվում է այն բանում, որ նախկինում հարել էր դաշնակներին, եղել նրանց գրոհայիններից, մասնակցել «աղքեջանական գյուղերի ջախջախմանը», ապա Կապանում ստեղծել է ընդհատակյա դաշնակցական կազմակերպություն՝ ձգտելով տապալել Խորհրդային իշխանությունը, կոլտնտեսություն չի մտել, քննադատել է այն և այլն<sup>28</sup>:

Կիրովականի «Պշ-15»-ում աշխատող բանվոր Ա. Գրիգորյանը և երկաթուղու հեռագրավար Ա. Կարաբեշիչյանը դատապարտվում են 5-ական տարի ազատազրկման՝ «1927 թ. տրոցկիստական կազմակերպության անդամ լինելու, «83-ի» պլանֆորմի տակ ստորագրելու, տրոցկիստական քարոզչություն կատարելու և արգելված գրականություն կարդալու համար: Ա. Գրիգորյանը մահանում է արքունակայրում 1942 թ.-ին»<sup>29</sup>:

Երևանի «Արարատ» գործարանի տեխնիկ-շինարար Ծ. Բաբայանը մեղադրվում է 1919 թ. Իրանում դաշնակցության կուսակցության մեջ մտնելու համար, ծառայել է դաշնակների կառավարության բանակում, մասնակցել «փետրվարյան արկածախնդրությանը», այնուհետև, Իրանից վերադառնալուց հետո, վարել հակախորհրդային ընդհատակյա աշխատանք: 1938 թ. հոկտեմբերին Ծ. Բաբայանը գնդակահարվում է<sup>30</sup>:

Երևանի գործարաններից մեկի բանվոր Պ. Առաքելյանի բախտն անկասկած բերում է: Նրան 1938 թ. ձեռքակալելով՝ մեղադրում են գործարանի բանվորների մեջ հակախորհրդային քարոզչություն վարելու, գաղտնի Իրան անցնելու նախապատրաստվելու, իր շուրջը հակախորհրդային տրամադրված խումբ հավաքելու մեջ և այլն: Սակայն, 1938 թ-ին վերանայում են գործը, կարճում և նրան արձակում հանցակազմի անապացուցելիության պատճառով<sup>31</sup>:

1938 թ. փետրվարին ձեռքակալվում են Երևանի բանվորական տրեստում աշխատող 4 քարագործներ, 2 դերձակ և 1 վարսավիր, (Հ. Ավետիսյան, Ա. Գասպարյան, Վ. Սկրտյան, Ա. Բուռնազյան, Մ. Մխիթարյան և Հ. Ֆերջուլյան), որոնք բոլորն էլ Արևմտյան Հայաստանից էին և հիմնականում մեղադրվում էին իրենց նախկին «մեղքերի», մասնավորապես դաշնակցական լինելու համար: Նրանց բոլորին դատապարտեցին 10-ական տարի ազատազրկման<sup>32</sup>:

Հարկ է նշել, որ այդ տարիներին բռնադատվածների ճնշող մեծամասնությունը, այդ թվում վերոհիշատակած բոլոր անձինք, հետագա տարիներին արդարացվել են՝ իրենց գործողություններում հանցակազմի բացակայության պատճառով:

Կարծում ենք, որ բերված օրինակները բավարար են ընդհանուր պատկերացում կազմելու Հայաստանի բանվորների նկատմամբ կիրառված բռնությունների հիմնական ուղղվածության մասին, ուստի այժմ ներկայացնենք ծառայողների վիճակը:

Ինչպես նշվել է, 1930-1938 թթ. Հայաստանում բռնությունների ենթարկված ծառայողները 724-ն էին: Այս խավի վերաբերյալ ռուսումնասիրությունները ցույց են տալիս, որ բռնություններն առավել աստիճանակալ են 1936-ից հետո: Այսպես, եթե 1930-1935 թթ. բռնադատվել է 203 ծառայող, ապա 1936-1938 թթ.՝ 521: Անհրաժեշտ է նշել, որ դրանց մեջ չեն մտնում բժիշկները, ուսուցիչները, գիտության, գրականության ու արվեստի գործիչները, որոնք և ս ծառայողներ են:

Ահա թե ինչպիսին է Հայաստանի ծառայողների հիմնական պատժապիների պատկերը նշված տարիներին՝

<sup>27</sup> Նույն տեղում, գ. 4377, թ. 16:

<sup>28</sup> Նույն տեղում, գ. 4726, թ. 17:

<sup>29</sup> Նույն տեղում, գ. 10354, թ. ք. 137, 203:

<sup>30</sup> Նույն տեղում, գ. 4800, թ. ք. 16, 19:

<sup>31</sup> Նույն տեղում, գ. 1105, թ. ք. 28-29, 58:

<sup>32</sup> Նույն տեղում, գ. 4511, թ. 99-105:

Պատժայալիք Տարեթիվը	2 տ.	3 տ.	5 տ.	10 տ.	ԳՈԳ	Ուղղիչ աշխ. ճամբար	Անտր	Դամ. ճամբ.	Ազատ են արձակվել	Գործը կտրվել է
1930	1	7	3	4	2	-	4	4	8	1
1931	1	8	2	2	-	-	8	5	5	2
1932	-	7	2	-	-	2	5	4	6	2
1933	-	7	2	-	-	3	5	2	22	22
1934	-	4	-	-	-	2	2	-	1	1
1935	4	7	-	1	-	7	3	-	2	2
1936	7	17	21	-	-	18	2	-	5	7
1937	1	1	16	37	111	24	4	-	15	3
1938	6	2	13	24	94	14	5	-	6	20
ԸՆդամները	20	56	59	68	207	80	36	15	70	60

Բռնադատված ծառայողների մեջ բարձրագույն կրթություն ունեին 115-ը, ոչ լրիվ բարձրագույն՝ 28-ը, միջնակարգ՝ 205-ը, սկզբնական՝ 93-ը, գրագետ էին՝ 128-ը, կիսագրագետ՝ 85-ը, անգրագետ՝ 21-ը: Երևանից բռնադատվել են 351-ը, Լենինականից՝ 134-ը, Կիրովականից՝ 44-ը և այլն: Ինչպես նկատելի է, մեծամասնությունը քաղաքաբնակներ էին: Ավելացնենք, որ այդ խավի ներկայացուցիչներից լրտեսության մեջ մեղադրվել են 8 հոգի, մյուսները այդ տարիների «ավանդական» հակախորհրդային, դաշնակցական, հակահեղափոխական և տրոցկիստական գործունեության մեջ:

Հարկ է նշել, որ բացի շարքային ծառայողներից, 1936-1938 թթ. նկատելի են բարձրաստիճան պաշտոնյաների ձերբակալությունները, մասնավորապես՝ տարբեր գործարանների, գերատեսչությունների տնօրենների և այլն: Պատճառները հասկանալի են, քանի որ 1936 թ. կեսերից սկսվել էին ճանաչված հասարակական-քաղաքական գործիչների, գիտնականների, գրականության և արվեստի ներկայացուցիչների նկատմամբ սաստկացած բռնաճնշումները, իսկ տնօրեններից շատերը հասարակության այդ խավերից էին: Օրինակ, Ն. Կուրսելը, որը 1922 թ. Հայաստան էր հրավիրվել Ալ. Մյասնիկյանի կողմից և բարձր պաշտոններ էր գրավել Անդրֆեդերացիայում և Հայաստանում, ձերբակալման ժամանակ շինարարական վարչության պետ էր, կամ կուսակցական գործիչներ Ն. Մակինցը՝ կուսակցական հրատարակչության, իսկ Է. Չուփուրյանը՝ Պետհրատի տնօրեններ էին<sup>33</sup>:

1930-ական թվականներին բռնադատված ծառայողների մեղադրանքները, բնականաբար, ինչ-որ չափով տարբերվում էին գյուղացիներին և բանվորներին տրված մեղադրանքներից: Մասնավորապես, բացի հակախորհրդային, հակահեղափոխական, տրոցկիստական, դաշնակցական պիտակներից, տրվում էին նաև վնասարար, էտեռ, Ա. Խանջյանի «ինքնասպանությանը» չիսկատարացող և ազգային կրքեր բորբոքող և այլ պիտակներ:

Այսպես, 1931 թ. 3-5 տարի ազատագրված ենթարկված ծառայողներ, Երևանի բնակիչներ Բ. Թադևոսյանը, Ա. Հայրապետյանը և Վ. Մարգարյանը մեղադրվում էին Երևանում՝ առաջինի գլխավորությամբ տրոցկիստական խումբ ստեղծելու մեջ, որտեղ ընդգրկված էին Հայկոպի և այլ գերատեսչությունների մի քանի աշխատակիցներ: Ինչպես նշված էր մեղադրական եզրակացությունում, նրանք, բացի այլ «հանցագործ մտադրություններից», պետք է «կազմակերպեին կոոպերատիվ խանութների թալան, որպեսզի վարկաբեկեին խորհրդային իշխանությունները ժողովրդի աչքում»<sup>34</sup>: Հասկանալի է, որ խմբի գործունեության վերջնական նպատակը նշված էր «գոյություն ունեցող կարգի տապալումը»:

Իսկ 1937-1938 թվականներին ձերբակալված Հողկոմժողկոմատի ծխախոտի բաժնի պետ Գ. Աղանայանը, Երևանի ունիվերսագի ծրագրավորող Վ. Սադոյանը, Ժողկոմխորհի խորհրդական Ա. Նալբանդյանը և մյուսները (8 մարդ) մեղադրվում են այն բանում, որ «մինչև խորհրդային կարգերի հաստատումը Հայաստանում եղել են էտեռների (սոցիալիստ-հեղափոխական- Ա. Մ.) կուսակցության անդամներ, և հետագայում, մինչև ձերբակալվելը վարել են թշնամական, ակտիվ կազմակերպական աշխատանք»<sup>35</sup>: Նրանք 1938 թ. դատապարտվում են 5-8-ական տարիների ազատագրված, իսկ 1955 թ.՝ արդարացվում:

1937 թ. գնդակահարվում է ՆԳԺԿ-ի համակարգում գլխավոր ինժեներ աշխատող Ա. Խաչատրյանը, որի մեղադրականում, բացի այլ «հակահեղափոխական-վնասարարական» գործունեությունից,

<sup>33</sup> Տես ՀՍՀ, հ. 6, եր., 1980, էջ 33:

<sup>34</sup> ՀՀ ՆԳ և ԱԱՆ ԱԱ արխիվ, գ. 4241, թ. 35-39:

<sup>35</sup> Նույն տեղում, գ. 3076, հ. 6, թ. 216:

նշված էր նաև այն, որ եղել է նախկին դաշնակցական բանակի շտաբ-կապիտան<sup>36</sup>:

Նման մեղադրանքներով 1937-1938 թթ. գնդակահարվեցին Արթիկ-Տուֆի գործերի կտառավարի Պ. Գյոնջյանը, Ախտայի փոստի աշխատակից Գ. Գարեջյանը, Հայկինոյի կապիտալ շինարարության պետ, Հայաստանի Ժողկոմխորհի նախկին գործերի կտառավարի Ի. Կարապետյանը, Լեռնականի պարենային արդյունաբերության աշխատակից Գ. Մարգարյանը և շատ ուրիշներ<sup>37</sup>:

Նրանց գործերից մերկայացնենք Ի. Կարապետյանին, որի մեղադրական եզրակացության մեջ կարդում ենք.

«1937 թ. սեպտեմբերին ՆԳԺԿ մարմինների կողմից Հայաստանում բացահայտվել և վերացվել է հ/հ, աջ-տրոցկիստական, ազգայնամոլական կազմակերպություն, որը վերջնական նպատակ էր դրել Խորհրդային իշխանության զինված տապալումը, Հայաստանի անջատումը ԽՍՀՄ-ից և, այսպես ասած «անկախ» ազգային-բուրժուական պետության ստեղծումը կապիտալիստական երկրներից մեկի հովանավորության տակ:

Իրենց հիմնական նպատակները իրագործելու համար, աջ-տրոցկիստական կազմակերպությունը կապվել էր արտասահմանյան հ/հ կենտրոնների հետ՝ հանձին դաշնակցների և ոսանկավարների, որոնք աշխատում են արտասահմանյան հետախուզությունների ղեկավարությամբ և նրանց հետ հաստատել փոխադարձ կապ հակախորհրդային աշխատանք կատարելու համար:

Արտասահմանյան հ/հ կենտրոնների հետ ավելի լավ կապ իրագործելու նպատակով՝ կազմակերպությունը օգտագործում էր Հայաստանում և արտասահմանում ճյուղեր ունեցող պաշտոնական կազմակերպությունը, այսպես կոչված «Հայաստանի Օգնության Կոմիտեն» (ՀՕԿ-ը):

Քննությանը պարզվել է, որ՝

Այդ կազմակերպության անդամներից մեկն էր Իսրայել Էլիասի Կարապետյանը, որը կազմակերպության մեջ է հավաքագրվել Հայաստանի Ժողկոմխորհի ն. (նախկին- Ա. Մ.) նախագահ Տեր-Գաբրիելյանի կողմից՝ 1930 թ. ...»<sup>38</sup>:

Ի. Կարապետյանի մեղադրականում տրված «հանցանքները» խիստ ընդհանրական էին 1930-ականներին հայ մտավորականությանը տրվող մեղադրանքների առումով, որը, ինչպես նկատելի է, տարածում էին նաև բոնադատված ծառայողների վրա: Մասնավորապես, նրանց ճշող մեծամասնությունը մեղադրվում էր հանրապետության նախկին ղեկավարներ Ա. Խանջյանի, Ս. Տեր-Գաբրիելյանի և ճանաչված հասարակական-քաղաքական գործիչ Ն. Ստեփանյանի գլխավորությամբ իբրև թե Հայաստանում գործող աջ-տրոցկիստական, ազգայնամոլական խմբերի մեջ ներգրավված լինելու մեջ, որը, ինչպես ցույց են տալիս 1930-ական թվականների գործերում ուսումնասիրությունները, չէր համապատասխանում իրականությանը:

Այսպիսով, 1930-ական թվականներին բռնաճնշումների ենթարկվեցին նաև Հայաստանի գյուղացիների և բանվոր-ծառայողների լավագույն ներկայացուցիչներից շատերը, որը, բնականաբար, բացասական ազդեցություն գործեց հանրապետության տնտեսական զարգացման վրա: Թե ինչպիսին էր այդ վնասի նյութական չափը, այժմ դժվար է հաշվարկել, սակայն այն պատճառեց նաև բարոյական հսկայական վնաս, որի հետևանքները զգալի են անգամ մեր օրերում:

**А. С. МАНУКЯН- Рабочие-служащие и крестьяне Армении - жертвы сталинских репрессий.-** В 1930-х годах на всей территории СССР, в том числе и в Армении бушевали сталинские репрессии, которые в свой кругооборот втянули также многочисленных представителей рабочих, служащих и крестьян. Наибольшее количество жертв этих репрессий в Армении составляло крестьянство - около 9 тыс. человек (из общего числа 14904 человек по данным архива НБ МВД и НБ РА). Соответственно были репрессированы 897 рабочих и 724 служащих. Это произвело отрицательное влияние на развитие промышленности и сельского хозяйства республики, а также нанесло огромный моральный ущерб, последствия которого ощутимы вплоть до наших дней.

<sup>36</sup> Նույն տեղում, գ. 1138, թ. 40:

<sup>37</sup> Նույն տեղում, գ. 4170, թ. 38:

<sup>37</sup> Տե՛ս նույն տեղը, գ. գ. 4502, 6042, 1151, 5836:

<sup>38</sup> Նույն տեղում, գ. 1151, թ. 37-38: